ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև գիտատեխնիկական համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Ռուսաստանի Դաշնության կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ անվտանգության մասին 1991 թվականի դեկտեմբերի 29-ի պայմանագրով,

համոզված լինելով, որ գիտատեխնիկական համագործակցությունը երկկողմ հարաբերությունների ողջ համալիրի կարևոր բաղկացուցիչ մասն է, և ընդունելով համագործակցության անհրաժեշտությունը գիտելիքների արագ տարածման և գիտական հետազոտությունների և մշակումների միջազգայնացման պայմաններում,

հաշվի առնելով Հայաստանի և Ռուսաստանի միջև պատմականորեն ձևավորված գիտատեխնիկական կապերը,

նկատի ունենալով, որ այդպիսի համագործակցությունը կնպաստի երկու երկրների և ժողովուրդների բարիդրացիական հարաբերությունների ամրապնդմանը, նաև նախադրյալներ կստեղծի փոխշահավետ առևտրատնտեսական կապերի զարգացման համար,

պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը կաջակցեն գիտատեխնիկական համագործակցությանը իրավահավասարության, փոխադարձության և փոխշահավետության սկզբունքների հիման վրա՝ հաշվի առնելով տնտեսավարման շուկայական համակարգը:

Հոդված 2

Նկատի առնելով երկու երկրներում գիտատեխնիկական առաջընթացի զարգացման գերակայությունը և ազգային գիտատեխնիկական ներուժերում ինտեգրացված տարրերի առկայությունը՝ Կողմերը կզարգացնեն համագործակցությունը հետևյալ ուղղություններով՝

- հիմնարար և կիրառական հետազոտություններ բնական գիտությունների բնագավառում,

- հետազոտություններ տեխնիկական գիտությունների և տեխնոլոգիաների զարգացման բնագավառում,
- հետազոտություններ հումանիտար և հասարակական գիտությունների բնագավառում,
- գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստում և վկայագրում,
- ստանդարտացում, չափագիտություն, հավաստագրում,
- արդյունաբերական սեփականության պաշտպանություն,
- գիտատեխնիկական ինֆորմացիայի ազգային համակարգերի շահագործում:

Կողմերը, որպես համատեղ գիտական հետազոտությունների գերակա ուղղություններ, սահմանում են.

- պարենի արտադրության բարձրարդյունավետ գործընթացներ,
- հեռուստահաղորդակցման հեռանկարային միջոցներ, կապի ինտեգրացված համակարգեր, տեղեկատվական տեխնոլոգիաներ,
- հեռանկարային նյութեր,
- բնական միջավայրի և կլիմայի համընդհանուր փոփոխություններ,
- երկրաբանություն, երկրաֆիզիկա, երկրաշարժագիտություն,
- պայքար առավել տարածված հիվանդությունների դեմ,
- մոր և մանկան առողջության պահպանություն,
- կենսաճարտարագիտական նորագույն մեթոդներ,
- էկոլոգիապես մաքուր էներգետիկա,
- բարձր էներգիաների ֆիզիկա,
- մարդու համագեն /գենոմ/,
- կառավարում /մենեջմենթ/,
- պետական կառավարման կազմակերպում,
- համաշխարհային մշակույթի և քաղաքակրթության պատմություն,
- կիրառական սոցիոլոգիա և քաղաքագիտություն:

Համագործակցության ուղղությունների ցանկը կարող է լրացվել և ճշգրտվել Կողմերի համաձայնությամբ:

Հոդված 3

2-րդ հոդվածում նախատեսված համագործակցությունը կիրականացնեն երկու երկրների նախարարությունները, գերատեսչությունները, գիտահետազոտական հիմնարկները, բուհերը, ֆիրմաները, գիտական կազմակերպությունները և ընկերությունները՝ իրենց իրավասության սահմաններում, ազգային օրենսդրությանը համապատասխան: Համագործակցության բովանդակությունը, նրա տնտեսական և կազմակերպական պայմանները, ներառյալ՝

- համագործակցության ֆինանսավորումը,

- համատեղ գիտահետազոտական աշխատանքների արդյունքների օգտագործումը,

- համագործակցության ընթացքում փոխանակվող տեղեկության հավաստիության և նյութերի ու սարքավորումների որակի համար պատասխանատվությունը,

- բարձրագույն որակավորմամբ գիտական և գիտամանկավարժական կադրերի վկայագրման և համապատասխան փաստաթղթերի համաձանաչման կարգը,

- համատեղ օգտագործման գիտատեխնիկական օբյեկտների շահագործման կարգը,

- հիվանդությունից ու դժբախտ դեպքերից գիտնականների և գիտատեխնիկական այլ անձնակազմերի ապահովագրումը,

կհամաձայնեցվեն անմիջական համագործակցության սուբյեկտների կողմից՝ առանձին համաձայնագրերի հիման վրա:

Հոդված 4

Սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցությունը կարող է իրականացվել հետևյալ ձևերով՝

- գիտատար տեխնոլոգիաների ստեղծման և յուրացման բնագավառում համատեղ գիտահետազոտական ծրագրերի, նախագծերի իրականացում,

- համատեղ գիտական ժամանակավոր կոլեկտիվների, լաբորատորիաների, նաև նոր տեխնիկան և տեխնոլոգիաներ յուրացնող նորաստեղծության ֆիրմաների և կազմակերպությունների ձևավորում,

- գիտական աշխատանք մյուս Կողմի գիտահետազոտական հիմնարկներում, բուհերում, տեխնոկայաններում, արխիվներում և թանգարաններում, ներառյալ համատեղ դաշտային հետազոտությունները և գիտարշավները,

- գիտատեխնիկական տեղեկության, փաստաթղթերի, գրականության և մատենագիտական հրատարակությունների, արտադրատեսակների նմուշների, նոու-հաուների և արտոնագրերի փոխանակում,

- գիտնականների և մասնագետների փոխանակում,

- համատեղ սեմինարների, գիտաժողովների, աշխատանքային հանդիպումների անցկացում,

- գիտնականների և մասնագետների որակավորման բարձրացում, ստաժավորման կազմակերպում,

ինչպես նաև փոխհամաձայնեցված այլ ձևերով, որոնք ապահովում են սույն Համաձայնագրի իրականացումը:

Հոդված 5

Համագործակցության համատեղ ծրագրերի և նախագծերի իրականացման համար Կողմերը կընդգրկեն պետական ու մասնավոր սեկտորների գիտական, գիտահետազոտական, նախագծային-կոնստրուկտորական և տեխնոլոգիական կազմակեպություններ, ինչպես նաև անհատ գիտնականների և մասնագետների: Կխրախուսվի համագործակցող կազմակերպությունների միջև ուղղակի կապերի զարգացումը:

Հոդված 6

Սույն Համաձայնագրի իրականացման և նրա կատարման ընթացքի վերահսկման նպատակներով Կողմերը ստեղծում են խառը աշխատանքային խումբ՝ կազմված շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների ներկայացուցիչներից: Աշխատանքային խումբը հավաքվում է տարեկան մեկ անգամից ոչ պակաս կամ, ըստ անհրաժեշտության, Կողմերից մեկի խնդրանքով՝ աշխատանքների կատարման ընթացքի գնահատման և համագործակցության զարգացման պլանների համաձայնեցման նպատակով:

Հոդված 7

Սույն Համաձայնագրի հիման վրա համագործակցություն իրկանացնելիս Կողմերը ապահովում են արդյունաբերական և մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությունը:

Համատեղ գիտական հետազոտությունների արդյունքների և գիտական հետազոտությունների արդյունքների ու գիտական հետազոտություններ կատարելիս ստացված այլ տեղեկատվության օգտագործման, ինչպես նաև պատենտավորման, հեղինակային իրավունքների հետ կապված, արդյունաբերական նմուշների և արդյունաբերական ու մտավոր սեփականության այլ իրավունքների պաշտպանության հարցերը, պետություններում գործող օրենսդրությանը համապատասխան, կհամաձայնեցվեն յուրաքանչյուր կոնկրետ դեպքում առանձին՝ համաձայնագրերի կնքման միջոցով, որոնք նախատեսված են սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածում:

Հոդված 8

Սույն Համաձայնագիրը չի շոշափում Կողմերի այն իրավունքները և պարտավորությունները, որոնք բխում են նրանց կողմից կնքված այլ միջազգային պայմանագրերից և համաձայնագրերից:

Հոդված 9

Սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել և լրացվել Կողմերի գրավոր փոխադարձ համաձայնությամբ:

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրից: Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի կասեցնելու սույն Համաձայնագրի գործողությունը՝ այդ մասին մյուս Կողմին վեց ամիս առաջ գրավոր տեղեկացնելով:

Կատարված է Մոսկվա քաղաքում 1993 թվականի հունվարի 11-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսերեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1993 թվականի հունվարի 11-ից: